ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐՈ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ ԿԱՐՈ ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հատոր **ԵՐԲՈՐԴ**

Տարածքային և քաղաքական կորուստներ. Քեմալիզմ

Գիրք **ԵՐԲՈՐԴ**

Երևան
«Հայաստան»
2003

1.(479.25)
Ճ.3(3հ (3))52

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ
FUND FOR ARMENIAN RELIEF
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Երախտապարտ եմ ընկերոջս՝ Վլադիմիր Մովսիսյանին, առանց որի այս հատորները լույս աշխարհ չէին գա

Ստ. Պողոսյան, Կ.Պողոսյան
797 **Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, Տարածքային և քաղաքական կորուստներ, Քեմալիզմ, III հ., գ. III. Եր.: Հայաստան, 2003, 560 էջ:**

Հատորում ներկայացված են Հայաստանի պատմական տարածքների կորուստները, ինչպես նաև դրամատիկ ժամանակահատվածում հայերի ճակատագրական ահռելիքները քաղաքականության մեջ: Հեղինակները ներկայացնում են պատմական, վավերագրական իրողություն հանդիսացող այն փաստական նյութը, որով բուրքերի կողմից ճանաչվում է՝ երիտ. Թուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանությունը: Հեղինակները անդրադառնում են նաև Քեմալիզմին:

020913
արտ.
01)03

189812
4000019110

ԳՄԴ 63.3(3հ(3))52

40-01831-1

© Պողոսյան Ս., Պողոսյան Կ., 2003թ.:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ I.

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎԱՐՔԸ

1. ԴԻԼԻՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՎԱՐԱՅՐ

Անդրանիկը Բաթումի պայմանագիրն անվանեց «չղթա», այն չընդունեց եւ կանգնեց մի իրողության առաջ, որ այլեւս չէր կարող համագործակցել մարդկանց հետ, որոնց գործունեությունը ոչ թե օգնում էր հայությանը, այլ նրան ավելի ու ավելի էր մղում ազգային կործանարար ճգնաժամի ճահիճը: Նա Դսեղը թողեց ու անցավ Դիլիջան, այստեղ ստացավ Բաթումի պայմանագրի պատճենն, որը նրան պարզապես հավասարակշռությունից հանեց: «Հայաստան, ուրեմն, առանց Ալեքսանդրապոլի, առանց Կարսի, առանց Սուրմալուի, առանց Ղարաբաղի, առանց Զանգեզուրի, առանց Նախիջեւանի»[1]: Եվ ապա՝ «Ես մեկ իղեալ եւ մեկ նպատակ ունեի՝ հարվածել մեր դարավոր թշնամուն»[2]: Սակայն ստացվել էր այնպես, որ նա պարտադրված էր գրելու իր զորամասը «հպատակուելով թուրքին, որուն դեմը ինքը ելած էր, երբ 200 զորք ուներ միայն, եւ ոչ իսկ 200 հրացան, ինքը՝ որ հիմայ ուներ անկախ Հայաստան... 1200 զորք եւ ավելի հրացան... կռնակը դաշնակիցներն ուներ եւ անոնց խոստումը...»[3]: Ահա այդ անկախ Հայաստանում էր ինքը պարտադրված զինաթափվել, գլուխ խոնարհել օտարի եւ ո՞ւմ՝ թուրքի առաջ: Դա վեր էր Անդրանիկի ուժերից: Նա այլեւս չէր կարողանում հոգեկան խռովքը զսպել, այն ենթարկել բանականությանը: Մի օր քաղաքի փողոցում տեսնում է աղբյուրից սափորով ջուր տանող մի կմախքացած կնոջ, որը չկարողանալով քայլել, նստում է քարին ու մեռելային դեմքով սկսում հեւալ:

– Հիվա՞նդ իս, քույրիկ,- հարցնում է Անդրանիկը:

Երիտասարդ կինը պատասխանելու ուժ չուներ եւ տարուբերում է գլուխը՝ այդ օրը միայն մի բուռ եգիպտացորեն էր կերել: Անդրանիկն ընդհանրացում կատարեց՝ ազգը մեռնում է: Փրկելու համար ինչ-որ արմատական, ոչ սովորական քայլի կարիքը կար: Նորաստեղծ հայկական կառավարության դեմ դուրս գալ չէր կարող: Սրբապղծություն էր. դա հայ դժնդակ իրականության միակ հուսատու ձեռքբերումն էր: Բայց նաեւ չէր կարող մնալ անկախ Հայաստանում ամոլ, անազատ վիճակում:

Հաջորդ օրը ստացվեց Ազգային խորհրդի հանձնարարականը՝ գրելու զորամասը: Նա կատաղած բղավեց. «Ըսեք Վեհիպ փաշային, թե Անդրանիկ իր զորքերը չպիտի գրե»: Եվ հարցին, թե «ապա ի՞նչ եք անելու», բղավեց. «Պարսկաստան պիտի տանիմ զանոնք ինձ հետ»:

---

[1] Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1992, էջ 363

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 11

[3] Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 364

Եվ տարավ: Անդրանիկի արշավին մասնակցում էր 4000 հոգուց կազմված մարտական ջոկատ եւ 20000 փախստական: Նա հույս ուներ Սալմաստի շրջանում հավաքագրել 8000 ասորի եւ 20.000 վանեցի փախստական, ճեղքել թուրքերի պաշտպանությունը Բաղդադի ուղղությամբ եւ միանալ անգլիացիներին:

1904թ. Սասունի ինքնապաշտպանական կռիվների վերջում նա հարկադրված եղավ ցրել իր գլխավորած հայդուկային խումբը, դրա մի մասին Թուրքիայից դուրս հանել, ինչի համար հետագայում շատ էր զղջացել: Իսկ ցրել իր զինվորներին անկախ Հայաստանում նրա բարոյական ըմբռնումներից դուրս էր: Անդրանիկն այդպես չէր կարող: Վկայում է ոմն քարտուղար Շիմշիրյանը. «Իմ զորքերը թրքահայեր են,- ասել է Անդրանիկը,- ես ինքս թրքահայ: Հաշտութիւն կնքողը եղած է ռուսահայ Ազգային խորհուրդը: Ես ինքզինքս պարտավոր չեմ զգար ենթարկուելու անոր ստորագրած հաշտութեան դաշնագրին: Բայց, որովհետեւ ես իրավունք չունիմ ապրելու այս երկրին մեջ եւ անոր համար դժուարութիւններ ստեղծելու, դուրս կելնեմ անոր սահմաններեն»[4]:

Անդրանիկն այսպես ասելով նկատի ուներ Բրեստ Լիտովսկում կնքված լրացուցիչ պայմանագրի 5-րդ հոդվածը, որ պարտավորեցնում էր «զորացրել» թուրքահպատակներից եւ ռուսահպատակներից կազմված հայկական չեթեները, որոնք գործում են «ինչպես Ռուսաստանում, այնպես էլ թուրքական գրավված նահանգներում»:

Անդրանիկը Հայաստանից իր հեռանալը բացատրում էր նաեւ հետեւյալ կերպ. «Երբեք համաձայն չլինելով իսկական հեղափոխականի ու հայրենասերի համար այդքան ստորացուցիչ պայմանագրին (Բաթումի), որով ես պետք է թույլ տայի թշնամու զորքերին գնալու եւ կռվելու դաշնակից եւ ինձ հարազատ ուժերի դեմ, ես որոշեցի Պարսկաստանով հասնել անգլիական զորամասերին, որոնց հույս ունեի գտնելու Սալմաստում»[5]:

Հազիվ թե հնարավոր է Անդրանիկի այս քայլը հիմնավորված ու ճիշտ համարել, փախուստը նորաստեղծ ազգային պետությունից, որը ծնունդի ցավերից բացի մեծ, ճակատագրական բնույթի դժվարություններ էր ապրում, իմաստուն չես համարի, բայց ազնիվ՝ անպայման:

Հաջորդ օրը Անդրանիկն իր զորամասով արդեն Ելենովկայում էր, որտեղ նա դիմում է զինվորներին, թե ճանապարհներից մեկը տանում է դեպի Երեւան, իսկ մյուսը՝ Նախիջեւան: Դուք ազատ եք ընտրելու դրանցից որեւէ մեկը: Ես գնում եմ Նախիջեւան, որպեսզի անցնեմ Միջագետք եւ միանալով անգլիացիներին, շարունակեմ կռիվը թուրքերի դեմ:

Այստեղից նա սուրհանդակներ է ուղարկում Երեւան՝ անվտանգության

[4] Թերզիպաշեան Ա., նշվ. աշխ., էջ 369
[5] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց. 2, գ. 11

խորհրդին եւ կաթողիկոսին տեղեկացնելու, թե գնում է Պարսկաստան, հույսով, որ անգլիացիներից օգնություն կստանա, կկարողանա միավորել Ուրմիայի շրջանում գտնվող վանեցիներին եւ շարժվելով Վանի ուղղությամբ թուրքերի դեմ նոր ճակատ բանալ:

Չիբուխլու գյուղում Անդրանիկին են այցելում նաեւ Խալիլի մարդիկ ու ներկայացնելով թուրք – հայկական պայմանագրի տեքստը, առաջարկում են՝ ստորագրել: Անդրանիկը պատասխանում է. «Այդ դաշնակցականների ապուրն է, իրամցրեք նրանց»: Նա հասկանում էր, որ Բաթումի պայմանագրով ազատ ու անկախ հայրենիք չեն ստեղծի եւ նորից զինակիցներին շարադրեց իր պլանը՝ Պարսկահայաստանի վրայով անցնել, փրկել 60.000 հայի, ստեղծել ամուր մարտական ուժեր եւ հարվածել թուրքերին: «Ով կուզե կարող է հետեւել իրեն կամ թողուլ զորամասը»[6]: Նրա առաջարկությունը չնայած լի էր վտանգներով, ամեն անգամ արժանանում էր խանդավառ հավանության:

Սկսվեց Անդրանիկի, նրա զորամասի ու հազարավոր արեւմտահայ փախստականների խելահեղ ոդիսականը, որքան ազնիվ ու հերոսական, նույնքան էլ ռոմանտիկ ու չհաշվարկված: Իզուր չէր Հովի. Թումանյանն ասում. «Կամ Նազարբեկովը պետք է Անդրանիկ լիներ եւ կամ Անդրանիկը՝ Նազարբեկով ու էս դժբախտությունը հայերի գլխին չէր գա»:

Նա որոշեց Սելիմի լեռնանցքով անցնել Պարսկաստան, որովհետեւ Երեւան-Նախիջեւան երկաթուղին մահմեդական բնակչության կողմից ավերված էր ու Բաթումի պայմանագրով դրված թուրքերի վերահսկողության տակ: Դա ճիշտ որոշում էր, որ նրան հնարավորություն տվեց փախստական զանգվածի համար Դիլիջան-Սեւան-Սելիմ-Սուլթանբեկ-Ջուլֆա ուղին անցնել մեկ ամսում:

Նոր Բայազետում նրա զորամասին միանում է Վարդան Շահբազի հեծյալ հարյուրյակը: Բայազետցիները զորավարին ընդունում ու ճանապարհում են մեծ խանդավառությամբ: Աղզիբիր գյուղում Ազգային խորհրդի ներկայացուցիչները պահանջում են, որ նա զենքերը հանձնի ու հեռանա Հայաստանից: Անդրանիկը թե՝ արդեն հեռանում եմ, բայց զենքերը չեմ հանձնի: Անդրանիկին շուքով դիմավորեցին նաեւ Ղարաքլուղում (Մարտունի): Դիլիջանից սկսած գրեթե բոլոր բնակավայրերում տասնյակներով երիտասարդներ, հին բանակի զինվորներ, շատ գաղթականներ միանում էին Անդրանիկի արշավին՝ նշանաբանով՝ «Որտեղ Անդրանիկ, այնտեղ մենք»: Սելիմի լեռնանցքով նա անցավ Քեշիշքենդ (Եղեգնաձոր), որտեղ նրան դիմավորում է գավառի կոմիսար Յապոնը:

Ադրբեջանական Բադամլու գյուղի «թուրքերը խոհեմ գտնվեցին, եւ զորամասը հանդիսավորությամբ անցավ գյուղի միջով, բարձր պարզած դրոշակը», Անդրանիկին շքեղ ընդունելություն ցույց տվեցին Մալիշկայում: Հունիսի 18-

[6] «Հայկական առաջին հարվածող զորամասը», Բոստոն, 1921, էջ 33